

iaomi Redmi 5A

Զանգե

2200+





ENERGY

060 46 46 46

www.panorama.am

ՀԱՅԿԵԼԻ ԱՐԱԳ ԻՆՏԵՐՆԵՏ

25

ԱՎԵԼԻ ԱՐԱԳ ԻՆՏԵՐՆԵՏ

29032018

EUR 589.19GBP 671.23

RUB 8.52USD 481.17

ցերեկ 23°C

գիշեր 11°C

ՀԱՅ

РУС

ENG

Որոնում

ԼՈՒԻԴԵՐԸ

ԶԱՐԱԶԱԿԱՆ

ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ԻՐԱՎՈՒՆԸ

ՄՇԱԿՈՒՅԹ

ՄՊՈՐՏ

ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆ

ՀԱՍԱՐԿՈՒԹՅՈՒՆ

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

20:29 14/03/2018

Ճապոնիայի դեսպանատան օգնությամբ լսողական ախտորոշիչ նոր սարքեր են ձեռք բերվում

«Արաբկիր» բժշկական կենտրոնում մարտի 14-ին պայմանագիր ստորագրվեց Ճապոնիայի դեսպանատան և «Հավատ» ՀԿ-ի միջև: Պայմանագրով նախատեսվում է Հայաստանում լսողության սկրինինգային ծրագիրն ընդլայնելու նպատակով ախտորոշիչ սարքերի ձեռքբերում: Այդ սարքերի շնորհիվ հնարավոր կլինի հետազոտել նորածիններին, հայտնաբերել լսողության խանգարումները, հասնել խնդրի լուծման:

Հայաստանում Ճապոնիայի արտակարգ և լիազոր դեսպան Էյջի Տագուչին նշեց, որ իրենք մեծ կարևորություն են հատկացնում այն ծրագրերին, որոնք ուղղված են Հայաստանի սոցիալ-տնտեսական իրավիճակի բարելավմանը և զարգացմանը: Այս տարի Ճապոնիայի կառավարությունն արդեն հաստատել է վեց նոր ծրագիր: Դեսպանի խոսքով՝ Ճապոնիայի կառավարության առաջնահերթություններից է կրթության, ինչպես նաև առողջապահական ոլորտը:

ՀՀ Աժ նախագահ Արա Բաբլոյանը նշեց, որ առողջապահության մասին խոսելիս պետք է հստակ պատկերացնել՝ հիմնական նպատակը պետք է լինի բնակչության առողջության պահպանումը, հիվանդությունների կանխարգելումը, հաշմանդամության և մահացության կրճատումը: Ըստ Աժ նախագահի՝ իրականացվող այս ծրագիրը ճիշտ առողջապահության հիմքում է դրված: «Մենք լավ հիշում ենք այն բոլոր դժվարությունները և այն բոլոր տառապանքները, որ ունեին թե երեխաները, թե նրանց ծնողները, և թե հասարակությունն ու պետությունը, երբ լսողության բնածին խանգարումները հայտնաբերվում էին ուշ տարիքում, և նույնիսկ մեծ ներդրումներ՝ պետությունից հատկացվող, կամ ծնողների կողմից վճարվող, չէին կարողանում կոմպենսացնել այն կորուստը, որը կարելի էր չունենալ, եթե խնդիրը հայտնաբերվեր նորածնային և վաղ մանկական հասակում»,- ասաց նա: Բաբլոյանի խոսքով՝ համեմատելու դեպքում ակնհայտ կլինի տարբերությունը, որ կա այն երեխաների խոսքում, ում մոտ խնդիրը հայտնաբերվել է վաղ հասակում, և նրանց խոսքում, ում հինգ-վեց տարեկանում արհեստականորեն սովորեցրել են խոսել:

«Այսօր մենք հնարավորություն ունենք համատեղ ջանքերով բոլոր ծննդատները այս սարքավորումներով ապահովել: Բոլոր ծնված երեխաները կանցնեն այդ հետազոտությունը, և եթե նրանցից որևէ մեկը նման խնդրի ունի, իսկ մենք գիտենք, որ, ցավոք, կա երեխաների որոշակի տոկոս, որ ունեն լսողության բնածին խանգարումներ, նրանք ժամ առաջ հնարավորություն կունենան ստանալու այն բոլոր միջամտությունները, որոնք թույլ կտան լիարժեքորեն ինտեգրվել հասարակության մեջ և հետագայում ընդհանուր մանկապարտեզ, դպրոց, բարձրագույն ուսումնական հաստատություններ գնալ»,- ասաց նա:

Աժ նախագահը կրկնեց այն, ինչ ասել էր Ճապոնիայի դեսպանի հետ հանդիպմանը. «Այն, ինչ պիտակավորված է Made in Japan, մենք խնդիր չունենք»: Աժ նախագահը իբրև վիրաբույժ ընդգծեց՝ վիրաբույժի գործի արդյունքը երևում է շատ արագ. այսօր վիրահատում են, վաղը ցավը չկա, երկու օր հետո պացիենտը գնում է տուն, բոլորը եղանակի են, բայց շեշտեց՝ իրենք բարձր են գնահատում այն գործընկերների ներդրումը, որի արդյունքը երևում է 10-20 տարի հետո, և դա անստույգ, հետևողական աշխատանքի արդյունք է:

«Հավատ» ՀԿ փոխնախագահ Թամարա Մանուկյանը նշեց, որ այս օժանդակությամբ իրենք հասնում են վաղուց սկսած աշխատանքների ցանկալի արդյունքին: Նրա խոսքով՝ թեպետ 21 ծննդատներում կարողանում են ստուգել նորածիններին,

ԼՐԱՅՈՒՆ

14:41

Հրազդանում ջերմոցային տնտեսություն կկառուցվի, Ապարանում՝ մանկապարտեզ, իսկ Փարաբարում՝ ՏՏ կենտրոն

14:24

Այսօր Լոբջան Դավիթը որևէ խնդիր չունի. Նախարարն իր պաշտոնակության մասին

14:22

Նախագահը ներկա է գտնվել «ԱրմՀայթեք-2018» միջազգային ցուցահանդեսի բացմանը

14:20

ԸՈ Կոտայքի բաժնամուկում արդեն 3-րդ անգամ կաշառքով վարորդական իրավունքի վկայական են տրամադրում

14:14

Ռուսաստանը վարկային նոր համաձայնագրով Հայաստանին զենքի մատակարարումը կսկսի այս տարի

14:00

Փորձագետ. «Թուրքիան միջուկային զենք կստեղծի 10-20 տարվա ընթացքում»

13:55

Արցախի ԱՆ-ն հրապարակել է պայթյունի հետևանքով վիրավորների անունները

13:50

Ազնավուրի թույլտվությամբ «Հայր Գորիոն»-ի հայերեն թարգմանության շապիկին կադր է նրա մասնակցությամբ ֆիլմից

13:47

Սերժ Սարգսյանը ստորագրել է Ազգային ժողովի ընդունած մի շարք օրենքներ

13:35

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում սկսվել են Ավագ հինգշաբթիի արարողությունները

13:28

Փարաբարում առաջին Էկո-պուրակը կբացվի

13:25

«HALO Trust»-ը՝ Ղազանչիում տեղի ունեցած միջադեպի վերաբերյալ

13:04

Երևանի հիմնադրման 2800-ամյակին նվիրված միջազգայնապետական այս տարի կանցկացվեն սեպտեմբերի 29-ին և 30-ին

12:53

Կառավարությունը բնակարան կնվիրի Սերժ Սարգսյանին

12:44

https://www.panorama.am/am/news/2018/03/14/%D5%AC%D5%BD%D5%B8%D5%B2%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%A1%D5%AD%D5%BF%D5%B

բայց դեռևս 23 ծննդատներ կան, որոնք դեռ ապահովված չեն այդ սարքերով, և այդ ծննդատների երեխաները դուրս են մտնում տուություններից: Մանուկյանը նշեց՝ վաղ հայտնաբերումը և վաղ միջամտությունը բերում է նրան, որ երեխաները խոսում են, սովորում, զարգանում:

|

Հավանել 59

Tweet

Աղբյուր՝ Panorama.am

մ սխալ կամ վրիպակ նկատելու դեպքում, ուղարկեք խմբագրին հաղորդագրություն՝ նշելով տվյալ սխալը, այնուհետև լ Ctrl-Enter:

աբանություն

Տեսակավորել ըստ

Լորագույնները



Մեկնաբանություն ավելացնել...

Facebook Comments Plugin

Մանե Թանդիյանն առաջարկում է եկամտահարկի վերադարձը կիրառել նաև ոչ ևորակառույց բնակարանների ձեռքբերման դեպքում

12:40
«Կոնդի առանձնատների տնտեսություն» ՊՈԱԿ-ի լիազորությունները կփոխանցվի կառավարությանը

12:32
«Վաղը կարող է, ասենք, թռչող տեսանկարահանող սարք կիրառվել»

12:18
Պետք է այնպիսի մեխանիզմ դնենք, որ բիզնեսի համար որևէ խոչընդոտ չստեղծվի. վարչապետը՝ բնապահպանության նախարարին

12:15
Սուրբ Չատիկին ընդառաջ. ինչպե՞ս ընտրել անվտանգ հավկիթ

12:07
Բակո Սահակյան. Ադրբեջանցի փախստականները կարող են վերադառնալ Արցախ՝ ընդունելով նրա իրավագորությունը

12:02
Դավիթ Բաբայան. Պայթյունի հետևանքով երեք արցախցի է զոհվել

12:00
Աղբահանության պայմանագրի կնքման ու հավաքագրման մասով պայմանագրերի թիվը դեռևս բավարար չէ. վարչապետ

11:55
Արծանագրվել են ընդերքօգտագործման իրավունքով տրամադրված հողամասերի կոորդինատների անճշտություններ. վարչապետ

11:46
Մարզպետարանների գործունեության պլանային իրատեսական ցուցանիշները ոչ ամբողջությամբ են իրականացվել. Վարչապետ

11:42
ԱԻՆ. Հզոր ցիկլոնի հետևանքով կլինեն առատ տեղումներ, բամու ուժգնացում

11:35
Կեմերովոյի հրդեհից տուժածների թիվը հասել է 79-ի

11:31
Բակո Սահակյանը Mirror-Spectator-ին. «խաղաղ գործընթացի հաջողության համար Արցախը պետք է լինի լիարժեք բանակցային կողմ»

11:26
Արցախում պայթյունից տուժածները վիրահատվում են

11:11
Արցախում տեղի ունեցած ականի պայթյունը կապ չունի պաշտպանության բանակի հետ. Սենոր Հասրաթյան

10:54
Կոմսեռո Բանևո հառառնում է UEFA Չեմպիոնների